

Թեմայի վերնագիրը՝ Լևոն Թութունջյանի ստեղծագործությունը

Ժամանակահատված՝ 12.2015 - 12.2016

**ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են աշխատանքներ Լևոն Թութունջյանի ստեղծագործության վերաբերող նյութերի հավաքման, արվեստագետի կյանքի օրոք և հետմահու ցուցահանդեսների շրջանակներում ցուցադրված աշխատանքների և արխիվային նյութերի, այդ ցուցահանդեսները կազմակերպած թանգարանների և ցուցասրահների հետ կապերի հաստատման, միջազգային աճուրդատներում նրա կտավների վերաբերյալ ուսումնասիրման, նյութի հավաքման և մանրամասն ուսումնասիրության ուղղությամբ:

Կապ է հաստատվել Դալասի արվեստի թանգարանի /ԱՄՆ/ և Մայերի գրադարանի հետ՝ Դալասի թանգարանում 1972թ. կազմակերպված Երկրաչափական աբստրակցիա 1926-1942թթ. ցուցահանդեսի վերաբերյալ, որին ցուցադրվել էին Թութունջյանի ստեղծագործությունները: Գտնվել է այդ ցուցահանդեսի արխիվային կատալոգը, պրես ռեկիզը, ցուցադրության լուսանկարները: Պարզվել է, որ Թութունջյանի աշխատանքներ են ցուցադրվել նաև 1980թ. Դալասի թանգարանում կազմակերպված Կոնստրուկտիվիզմը և երկրաչափական ավանդույթը՝ Մակ Կրորի կորպորացիայի հավաքածուի ընտրանին ցուցահանդեսի շրջանակներում:

Ստացվել են 1984թ. Պրակապաս ցուցասրահում Թութունջյանի գործերի ցուցադրության կատալոգի թվայնացված էջերը:

Կապ է հաստատվել Սաարկբրյուկենի Սաարլանդ գեղարվեստի թանգարանի հետ /Գերմանիա/՝ 1953թ. Ֆորմաներ և դեկորներ ցուցահանդեսի շրջանակներում

Թուրունջյանի ցուցադրած խեցեգործ աշխատանքների վերաբերյալ: Ստացվել են ցուցահանդեսի թվայնացված կատալոգի տեքստերը գերմաներեն լեզվով:

Նյութեր են հավաքագրվել Թուրունջյանի ժամանակակից արվեստագետների կենսագրությունների վերաբերյալ, որոնց հետ Թուրունջյանը ունեցել է ընկերական և գործնական հարաբերություններ՝

- Ժան Արպ
- Ժան Հելիոն
- Օգյուստ Էրբեն
- Օտտո Գուստաֆ Կարլսունդ
- Դավիդ Կակաբաձե
- Մարսել Կան
- Լեոնս Ռոզենբերգ

Գտնվել է Փարիզում 1969թ. լույս տեսած *Ֆրանսերենով արտայայտուող հայ արուեստագետներ* գրքի / հեղ.՝ Սերովբե Մխիթարեան /՝ Թուրունջյանին վերաբերող գլուխը:

Ֆրանսերենից հայերեն են թարգմանվել Գլադիս Ֆաբրի 1994թ. լույս տեսած Թուրունջյանին նվիրված մենագրության հատվածները՝ Կանդինսկու և Պոլ Կլեի տեսական աշխատանքների և Թուրունջյանի արվեստի ընդհանրությունների, Կոնկրետ Արվեստ և Աբստրակցիա-ստեղծագործություն խմբավորումների մասին, որոնց հիմնադիր անդամներից մեկը Թուրունջյանն էր: Ուսումնասիրվել են Թուրունջյանի գրաֆիկական աշխատանքների կոմպոզիցիոն լուծումների գաղափարային ընդհանրությունները Կանդինսկու «Կետը և գիծը հարթության վրա» և Պաուլ Կլեի «Դասավանդական էսքիզներ» տեսական աշխատությունների հետ:

Կապ է հաստատվել և նյութեր են սպասվում Թուրունջյանի ստեղծագործությունների հետմահու ցուցահանդեսների, Թուրունջյանի հետ առնչվող արխիվային նյութերի վերաբերյալ հետևյալ հաստատություններից՝

- Բազելի գեղարվեստի թանգարան /1944թ. կազմակերպված Կոնկրետ արվեստ /“Konkrete kunst”/ ցուցահանդես/
- Մյունստերի թանգարան /1980թ. կազմակերպված Ռեյլեֆներ ցուցահանդես/
- Միլանի Լորենցո ցուցասրահ /1964թ. կազմակերպված “44 protagonisti della visualitastructura” ցուցահանդես/
- Ինսբրուկի թանգարան /1972թ. կազմակերպված “NACH 1900” ցուցահանդես/
- Լոնդոնի Անելի Յուդա ցուցասրահ
- Բեռլինի Ազգային պատկերասրահ /1971թ. կազմակերպված Ոչ օբյեկտիվ գեղանկարչությունը 1924-39թթ. ցուցահանդես/
- Ժան Արպ հիմնադրամ
- Ժան Արպի թանգարան
- Պարլո Պիկասոյի թանգարան

Փարիզյան Լե Մինտոր ցուցասրահից ստացվել են տեղեկություններ 2016թ. հոկտեմբերի 23-26-ը Փարիզում FIAC 2016 միջոցառման շրջանակներում Օ.Է 38 ստենդում *Կոնստրուկտիվիզմից դեպի աբստրակցիա-ստեղծագործություն* խորագրով ցուցադրված Թուրունջյանի ստեղծագործությունների մասին:

Մանրամասնորեն հավաքագրվել են 1988-2016թթ. ընթացքում միջազգային ներոհիշյալ աճուրդատներում վաճառված Թուրունջյանի կտավների վերաբերյալ եղած նյութերը՝

- «Christie's» աճուրդային տուն, Լոնդոն, Մեծ Բրիտանիա
- «Bonhams» աճուրդային տուն, Լոնդոն, Մեծ Բրիտանիա
- «Sotheby's» աճուրդային տուն, Լոնդոն, Մեծ Բրիտանիա
- «Sotheby's» աճուրդային տուն, Նյու-Յորք 10021, ԱՄՆ
- «Sotheby's» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա
- «Galateau» աճուրդային տուն, Լիմոժ, Ֆրանսիա
- «Briest» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա
- «Perrin-Royère-Lajeunesse » աճուրդային տուն, Վերսալ, Ֆրանսիա
- «Sotheby's» աճուրդային տուն, Լոնդոն, Մեծ Բրիտանիա
- Renard աճուրդային տուն, Ժիեն, France
- «Delavenne-Lafarge» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա
- «Loudmer» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա
- «KOHN» աճուրդային տուն, Դովիլ, Ֆրանսիա

- « Binoche» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա
- «Boisgirard» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա
- «Gros-Delettrez» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա
- «Auktionsverket» աճուրդային տուն, Ստոկհոլմ, Շվեդիա
- «Calmels-Cohen (S.V.V.)» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա
- « Deauville Auction, Le Houelleur & Bailleul» աճուրդային տուն, Դովիլ Ֆրանսիա
- «Barridoff Galleries» աճուրդային տուն, ԱՄՆ
- «Massol S.A. (S.V.V.)» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա
- «Tajan (S.V.V.)» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա
- «Cornette de Saint-Cyr Bruxelles 89» աճուրդային տուն, Բրյուսել, Բելգիա
- «Thierry-Lannon & Associes S.A.R.L.» աճուրդային տուն, Բրեստ, Ֆրանսիա
- «Honfleur Encheres SARL» աճուրդային տուն, Ֆրանսիա
- «Estim Nation» աճուրդային տուն, Փարիզ, Ֆրանսիա

2016թ. հոկտեմբերի 7-31 Երևանի Ժամանակակից արվեստի թանգարանում «Բարձր Արվեստ» կերպարվեստի կենտրոնի կողմից կազմակերպված «Անկախություն» ցուցահանդեսի շրջանակներում ցուցադրվել են Թուրունջյանի յուղաներկ և գրաֆիկական աշխատանքներ:

2017թ. սեպտեմբերի 5-29 Կոմիտասի անվ. ինստիտուտ- թանգարանում «Բարձր Արվեստ» կերպարվեստի կենտրոնի կողմից կազմակերպված «Ընտրանի» ցուցահանդեսի շրջանակներում ցուցադրվել են Թուրունջյանի յուղաներկ և գրաֆիկական աշխատանքներ, հոկտեմբերի 1ից մինչև դեկտեմբերի 2-ը ցուցահանդեսը կշարունակվի Շեդեվր ցուցասրահում, ինչը կնպաստի արվեստագետի ստեղծագործության պրոպագանդմանն իր պատմական հայրենիքում:

**«ԼԼՈՆ ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հրատարակվել են հետևյալ հոդվածները՝

1. Գարասեֆերյան Ի., Հայոց եղեռնի արձագանքը Լևոն Թուրունջյանի արվեստում», Հայոց ցեղասպանություն - 100. ճանաչումից՝ հատուցում միջազգային գիտաժողովի զեկույցների դրույթներ, 2015թ., էջ 281-283
2. Գարասեֆերյան Ի., Լևոն Թուրունջյանի արվեստը. Համեմատական վերլուծություն, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջան՝ նվիրված Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին, (նստաշրջանի նյութեր), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 81-89:

Ի.Գարասեֆերյանը « Լևոն Թուրունջյան. Կոնկրետ Արվեստ, Աբստրակցիա-ստեղծագործություն» զեկուցումով մասնակցել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո գործող Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և Գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ 2016թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գումարած Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներկերորդ նստաշրջանի աշխատանքներին՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին: Ի.Գարասեֆերյանի զեկուցման համար հիմք է հանդիսացել Գլադիս Ֆարրի «Լևոն Թուրունջյան» մենագրության /1994/ և Սեն Ժերմեն- լա -Բլանշ- Եղբում /*Abbaye d'Ardenne à Saint-Germain-la-Blanche-Herbe*/ արխիվից ստացված *Աբստրակցիա- ստեղծագործություն* պարբերագրի նյութերի ուսումնասիրությունը: